

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Կրթական համակարգի արդյունավետությունն ապահովելու, ուսումնական գործի առաջընթացը խթանելու և ուսանողների գիտելիքների գնահատման գործում առավել անկողմնակալություն երաշխավորելու նպատակով Երևանի պետական համալսարանում բակալավրիատի ուսանողների համար կիրառվում է գիտելիքների գնահատման համակարգ, որի հիմքում դրված է առավել կարևոր մասնագիտական առարկաներից ընթացիկ քննությունների անցկացման սկզբունքը:

Ընթացիկ քննությունների կիրառումը հետապնդում է 3 նպատակ՝

- ա/ ապահովել առարկայից առավել խոր գիտելիքների յուրացում՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կողմից կատարվող աշխատանքի միջոցով.
- բ/ ոյուրացնել ուսումնառության գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնել մաս առ մաս.
- գ/ բարձրացնել ուսանողների ուսումնական կարգապահությունը:

1. Քննաձևը

- 1.1. Ընթացիկ քննությունը կիսամյակի ընթացքում՝ մինչև քննաշրջանը, դասընթացի որոշակի բաժնի /բաժինների/ յուրացման մակարդակի ստուգումն ու գնահատումն է:
- 1.2. Ընթացիկ քննություններ սահմանվում են բակալավրիատի 1-7 կիսամյակներում՝ քննությամբ ավարտվող մասնագիտական դասընթացների համար:
- 1.3. Յուրաքանչյուր կիսամյակում դասավանդվող 2-3 առարկաներից սահմանվում են երկու ընթացիկ և մեկ հանրագումարային քննություններ: Ընթացիկ քննությունների ընդհանուր թիվը յուրաքանչյուր կիսամյակում չպետք է գերազանցի վեցը:
- 1.4. Ընթացիկ քննությունների ցանկը և անցկացման ժամանակացույցն առաջարկում է ֆակուլտետի ղեկավարը և հաստատում է պրոռեկտորը: Այդ մասին ուսանողներին տեղեկացվում է կիսամյակի սկզբին: 2-րդ ընթացիկ քննությունները անցկացվում են կիսամյակի վերջին երկու շաբաթների ընթացքում: Ընթացիկ քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական վարչություն:
- 1.5. Ընթացիկ քննությունները և դրանց մարումը անց են կացվում գրավոր եղանակով /բացառիկ դեպքերում, ֆակուլտետի խորհրդի հիմնավորմամբ և ռեկտորատի համաձայնությամբ՝ բանավոր/: Սահմանվում է գրավոր քննության չորս ձև՝ հարցաշար /թեստ/, ստուգողական աշխատանք, նախորդ երկուսի զուգակցում, ստեղծագործական աշխատանք: Քննաձևի ընտրությունը և անհրաժեշտ նյութերի պատրաստումը իրականացնում է համապատասխան ամբիոնը՝ ղեկավարի հսկողությամբ:
- 1.6. Ընթացիկ քննություններն անցկացնում են տվյալ առարկան դասավանդող դասախոսները՝ առարկային դասացուցակով հատկացված ժամերին: Ընթացիկ քննությունները հանձնելու համար ուսանողը դասերից չի ազատվում: Քննությունների անցկացման նկատմամբ հսկողությունը իրականացվում է ղեկավարի և ուսումնական վարչության կողմից:
- 1.7. Հանրագումարային քննությունը տվյալ դասընթացի կիսամյակային նյութի յուրացման ամփոփումն ու գնահատումն է: Հանրագումարային քննություններն անցկացվում են բանավոր կամ գրավոր /ղեկավարի հայեցողությամբ/ քննաշրջանին հատկացված ժամանակաշրջանում:
- 1.8. Ստուգարքների ընդունումը կազմակերպվում է կիսամյակի վերջին շաբաթվա ընթացքում:
- 1.9. Ուսանողին արգելվում է մասնակցել տվյալ դասընթացի ընթացիկ քննություններին, եթե լաբորատոր, գործնական կամ սեմինար պարապմունքների կատարողականը 50% -ից պակաս է: Տվյալ դասընթացի լաբորատոր պարապմունքների ստուգարքը չհանձնած ուսանողին չի

թույլատրվում մասնակցել այդ առարկայի հանրագումարային քննությանը, և նա հեռացվում է համալսարանից:

2. Գնահատման կարգը

2.1. Ընթացիկ քննությունները գնահատվում են 20 միավորանոց սանդղակով (0-ից մինչև 20 միավոր), իսկ հանրագումարային քննությունը գնահատվում է 2 (անբավարար), 3 (բավարար), 4 (լավ) և 5 (գերազանց):

Ընթացիկ քննության 0-7 միավորին համապատասխանում է 2 (անբավարար) գնահատականը, 8 – 12-ին՝ 3 (բավարար), 13 – 17-ին՝ 4 (լավ) և 18 –20-ին՝ 5 (գերազանց):

2.2. Յուրաքանչյուր քննություն /ընթացիկ կամ հանրագումարային/ գնահատվում է առանձին: Գրավոր քննության տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը՝ համապատասխանի ընթացիկ քննությանը հատկացվող ժամանակահատվածին: Ուսանողներին արդյունքների մասին տեղեկացնելուց և գրավոր աշխատանքներին ծանոթացնելուց հետո արդյունքներն ամփոփվում են քննական տեղեկագրերում: Ուսանողը իրավունք ունի բողոքարկել իր գնահատականը արդյունքների հրապարակման օրվա ընթացքում, իսկ ստուգող դասախոսի հետ անհամաձայնության դեպքում կարող է երկօրյա ժամկետում բողոքարկելու նպատակով դիմել դասընթացը սպասարկող ամբիոնի վարիչին, ապա ֆակուլտետի ղեկավարին:

2.3. Ընթացիկ քննությունը համարվում է հանձնած, եթե ուսանողը ստացել է առնվազն 8 միավոր: Առարկայի 1-ին ընթացիկը չհանձնած ուսանողը այն վերահանձնում է 2-րդ ընթացիկ քննության ժամանակ, իսկ երկրորդը հանձնում է ընթացիկ քննությունների մարման ժամանակ: Դեկանատի որոշմամբ 1-ին ընթացիկը չհանձնած ուսանողները կարող են հանձնել երկրորդ ընթացիկը, իսկ առաջինը վերահանձնել ընթացիկ քննությունների մարման ժամանակ:

2.4. Տվյալ դասընթացի մեկ կամ երկու ընթացիկ քննություն չհանձնած (8 միավորից ցածր ստացած կամ չներկայացած) ուսանողները չեն մասնակցում հանրագումարային քննությանը, իսկ քննական տեղեկագրում որպես վերջնական գնահատական գրանցվում է 2 (անբավարար):

2.5. Տվյալ առարկայի երկու ընթացիկ քննություններից դրական գնահատական /8 և ավելի միավոր/ ստացած ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի հանրագումարային քննությանը՝ պահպանելով իր 3 (բավարար) գնահատականը՝ 8-12 միջինի դեպքում կամ 4 (լավ)՝ 12,5 և բարձր միջինի դեպքում: Հաշվարկվում է ընթացիկ քննություններից ստացած միավորների միջին քվարանականը: 5 (գերազանց) գնահատական ստանալու համար հանրագումարային քննությանը մասնակցելը պարտադիր է:

2.6. Ուսանողն իրավունք ունի ընթացիկ քննությունների արդյունքներով ստացած 3 (բավարար) կամ 4 (լավ) գնահատականը բարձրացնել հանրագումարային քննության ժամանակ, և այն ենթակա չէ իջեցման:

2.7. Դասընթացի ընթացիկ քննությունները հանձնած, սակայն հարգելի պատճառով հանրագումարային քննությանը չներկայացած, բայց այդ մասին ղեկանատին նախօրոք տեղեկացրած ուսանողները կարող են բարձրացնել գնահատականը «բաց դռների» օրը, հակառակ դեպքում՝ ղեկանատի կողմից որպես հանրագումարային գնահատական գրանցվում է ընթացիկ քննությունների արդյունքներով ստացած 3 (բավարար) կամ 4 (լավ) գնահատական:

2.8. Հանրագումարային քննության ժամանակ ուսանողը կարող է հավակնել՝

ա/ 4 (լավ) գնահատականի, եթե նախորդ փուլերի արդյունքում ստացած միջին գնահատականը կազմում է 8-12 միավոր,

բ/ 5 (գերազանց) գնահատականի, եթե նախորդ փուլերի արդյունքում ստացած միջին գնահատականը առնվազն 12,5 միավոր է և տվյալ դասընթացից կատարողականը 90% -ից բարձր է:

2.9 Ընթացիկ քննություններ չունեցող կամ ստուգարքով ավարտվող առարկաների դեպքում քննությանը (ստուգարքին) չներկայացած ուսանողի անվան դիմաց քննական (ստուգարքային) տեղեկագրում գրանցվում է «չի ներկայացել»:

2.10. Քննությանը չներկայանալը համարվում է հարգելի միայն երեք օրվա ընթացքում (քննության օրը և դրան հաջորդող 2 աշխատանքային օրերը) ղեկանատուն գրանցված ուսանողական պոլիկլինիկայի տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում: Ստացիոնար բուժման մեջ գտնվող ուսանողը կարող է ըստ կարգի ձևակերպել տարկետում կամ ռեկտորատի թույլտվությամբ հետաձգել քննաշրջանը: Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ղեկանի ներկայացմամբ որոշումը կայացվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

3. Պարտքերի մարման կարգը

- 3.1. Ուսանողն իրավունք ունի տվյալ առարկայի չհանձնած ընթացիկ քննությունները վերահանձնել հանրագումարային քննությանը նախորդող մեկ-երկու օրվա ընթացքում:
- 3.2. Քննաչրջանի ընթացքում միայն մեկ քննական առարկայից և ամենաշատն երկու ստուգարքից պարտք ունեցող ուսանողները կարող են դրանք վերահանձնել «բաց դռների» օրը, որն անցկացվում է քննաչրջանին հաջորդող երկու օրվա ընթացքում: Առաջին օրը ուսանողը կարող է վերահանձնել տվյալ առարկայի ընթացիկ քննությունները, իսկ երկրորդ օրը կազմակերպվում է հանրագումարային քննությունը:
- 3.3. Պարտքերի մարման համար սահմանվում է երեք շրջան, անցկացման ձևը՝ բանավոր կամ գրավոր (դեկանատի հայեցողությամբ):
- 3.4. Մեկ ընթացիկը չհանձնած ուսանողները վերահանձնում են այն (գրավոր) և կարող են հավակնել 5 (գերազանց) գնահատականի պարտքերի մարման միայն 1-ին շրջանում սույն կանոնակարգի 2.9 կետի բ/ ենթակետի պահանջներին բավարարելու դեպքում: Տվյալ առարկայի երկու ընթացիկ քննությունները չհանձնած ուսանողները վերահանձնում են ամբողջ դասընթացի նյութն ընդգրկող միասնական տարբերակներով (գրավոր) և չեն կարող հավակնել 5 (գերազանց) գնահատականի: Պարտքերի մարման շրջանում քննության չներկայացած ուսանողի անվան դիմաց տեղեկագրում գրանցվում է 2 (անբավարար):
- 3.5. Ընթացիկ քննություն չունեցող առարկաներից ուսանողը կարող է հավակնել 5 (գերազանց) գնահատականի պարտքերի մարման միայն 1-ին շրջանում: Պարտքերի մարման 2-րդ և 3-րդ շրջաններում քննության չներկայացած ուսանողի անվան դիմաց տեղեկագրում գրանցվում է 2 (անբավարար):
- 3.6. Պարտքերի մարման 3-րդ շրջանում քննությունների ընդունումը կազմակերպվում է հանձնաժողովներով: